# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Էլ. հասցե՝proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐ 2015 թվականի N 6

### ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով,

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հաստատել համայնքի ավագանու թիվ 2-րդ արտահերթ նիստի օրակարգը՝ բաղկացած հետևյալ հարցերից.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան գյուղական համայնքի ավագանու 2014թ.-ի դեկտեմբերի 22-ի թիվ 33 որոշման հավելվածների մեջ փոփոխություններ կատարելու մասին
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան գյուղական համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 34-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին
3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան գյուղական համայնքի ավագանու դեկտեմբերի 22-ի թիվ 35-Ն որոշման հավելվածի մեջ փոփոխություններ կատարելու մասին
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան գյուղական համայնքի ավագանու 2014թ.-ի դեկտեմբերի 22-ի թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

Մովսիսյան Արմեն
Իսրայելյան Խաչիկ
Մկրտչյան Յուրիկ
Ենոքյան Արթուր
Անդրանիկ Հարությունյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Էլ. հասցե՝proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2015 թվականի N 7

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 33 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Մ. Գաբեգինյանի 23.01.2015թ.-ի թիվ 07/151/233-15 գրությանը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Պռոշյան համայնքի ավագանու 2014թ.-ի դեկտեմբերի 22-ի թիվ 33 որոշման հավելվածում կատարել փոփոխություն հաստիքային միավոր և դրույք հասկացություններում /համաձայն հավելվածների/:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

Մովսիսյան Արմեն
Իսրայելյան Խաչիկ
Մկրտչյան Յուրիկ
Ենոքյան Արթուր
Անդրանիկ Հարությունյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
Պռոշյան համայնքի ավագանու
2014թ.-ի դեկտեմբերի 22-ի թիվ 33 որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## Պռոշյանի գյուղապետարանի աշխատակազմի

Աշխատակիցների թվաքանակը՝ 18

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Գյուղապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 310000 | | | 310000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | | 1 | 238700 | | | 238700 |
| 3 | | Համայնքի ղեկավարի օգնական | Հայեցողական | | 1 | 220000 | | | 220000 |
| 4 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 238700 | | | 238700 |
| 5 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-1 | 1 | 225000 | | | 225000 |
| 6 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-2 | 1 | 225000 | | - | 225000 |
| 7 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 187000 | | | 187000 |
| 8 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-2 | 1 | 187000 | | | 187000 |
| 9 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1.-3 | 1 | 187000 | | | 187000 |
| 10 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1.-4 | 1 | 187000 | | | 187000 |
| 11 | | I-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2.-1 | 1 | 167000 | | | 167000 |
| 12 | | I-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2.-2 | 1 | 167000 | | | 167000 |
| 13 | | I-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2.-3 | 1 | 167000 | | | 167000 |
| 14 | | Կոմունալ ծառայության պետ | Տեխնիկական սպասարկող | | 1 | 130000 | | | 130000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | | Աղբահանության գումարներ հավաքագրող | Տեխնիկական սպասարկող | | 1 | 85000 | | | 85000 |
| 16 | | Օժանդակ բանվոր | Տեխնիկական սպասարկող | | 1 | 96000 | | | 96000 |
| 17 | | Կոմունալ ծառայության բանվոր | Տեխնիկական սպասարկող | | 1 | 75000 | | | 75000 |
| 18 | | հավաքարար | Տեխնիկական սպասարկող | | 1 | 75000 | | | 75000 |
| | Ընդամենը | | | | 18 | | | | |

Համայնքի ղեկավար Ա. Մուրադյան

Հավելված
Պռոշյան համայնքի ավագանու
2014թ.-ի դեկտեմբերի 22-ի թիվ 33 որոշման

## ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Պռոշյանի <<Կարոտ Մկրտչյան>>-ի անվան մանկապարտեզ ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 8

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 6 | 7 | 8 | 10 |
| 1 | <<Կարոտ Մկրտչյան>>-ի անվան ՀՈԱԿ | տնօրեն | քաղաքացիաիրավական | 1 | 99 000 | | 99 000 |
| 2 | | գեղմասվար | քաղաքացիաիրավական | 1 | 80 300 | | 80 300 |
| 3 | | գրադարանավար | քաղաքացիաիրավական | 2 | 80 300 | | 160 600 |
| 4 | | հաշվապահ | քաղաքացիաիրավական | 1 | 78 100 | | 78 100 |
| 5 | | հավաքարար | Տեխնիկական սպասարկման | 1 | 78 100 | | 78 100 |
| 6 | | խմբակի կազմակերպիչ | քաղաքացիաիրավական | 1 | 80 300 | | 80 300 |
| 7 | | պանթեոնի օժանդակ բանվոր | Տեխնիկական սպասարկման | 1 | 81 400 | | 81 400 |
| | Ընդամենը | | | | | | 657 800 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
Դողշյան համայնքի ավագանու
2014թ.-ի դեկտեմբերի 22-ի թիվ 33 որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## Դողշյանի <<Աստղիկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 19

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 6 | 7 | 8 | 10 |
| 1 | <<ԱՍՏՂԻԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ | տնօրեն | քաղաքացիաիրավական | 1 | 130 000 | | 130 000 |
| 2 | | դաստիարակ | քաղաքացիաիրավական | 4 | 82 500 | | 412 500 |
| 3 | | դաստիարակի օգնական | քաղաքացիաիրավական | 4 | 80 300 | | 353 320 |
| 4 | | մեթոդիստ | քաղաքացիաիրավական | 1 | 80 300 | | 40 150 |
| 5 | | բուժքույր | քաղաքացիաիրավական | 1 | 79 200 | | 79 200 |
| 6 | | Գլխավոր հաշվապահ | քաղաքացիաիրավական | 1 | 79 750 | | 79 750 |
| 7 | | Տնտեսվար | քաղաքացիաիրավական | 1 | 78 100 | | 78 100 |
| 8 | | Գործավար | քաղաքացիաիրավական | 1 | 78 100 | | 78 100 |
| 9 | | խոհարար | քաղաքացիաիրավական | 1 | 79 750 | | 79 750 |
| 10 | | խոհարարի օգնական | քաղաքացիաիրավական | 1 | 79 200 | | 79 200 |
| 11 | | օժանդակ բանվոր | քաղաքացիաիրավական | 1 | 78 100 | | 39 050 |
| 12 | | դերձակ | Տեխնիկական սպասարկման | 1 | 78 100 | | 39 050 |
| 13 | | պահակ | Տեխնիկական սպասարկման | 1 | 78 100 | | 78 100 |
| 14 | | դռնապան | Տեխնիկական սպասարկման | 1 | 78 100 | | 78 100 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | | հնոցապան | Տեխնիկական սպասարկման | 1 | 78 100 | | 78 100 |
| 16 | | լվացարար | Տեխնիկական սպասարկման | 1 | 78 100 | | 78 100 |
| 17 | | հաշվետար գանձ. | Տեխնիկական սպասարկման | 1 | 78 100 | | 78 100 |
| 18 | | երաժիշտ | Տեխնիկական սպասարկման | 1 | 78 100 | | 78 100 |
| 19 | | ֆիզ. Հրահանգիչ | քաղաքացիաիրավական | 1 | 78 100 | | 78 100 |
| | Ընդամենը | | | | | | 2 034 870 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
էլ. հասցե՛proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2015 թվականի N 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 34-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի դրույթներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Չեղյալ ճանաչել Պռոշյան համայնքի ավագանու 2014թ.-ի դեկտեմբերի 22-ի թիվ 34-Ն որոշումը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

Մովսիսյան Արմեն
Իսրայելյան Խաչիկ
Մկրտչյան Յուրիկ
Ենոքյան Արթուր
Անդրանիկ Հարությունյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Էլ. հասցե՝proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2015 թվականի N 9

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Մ. Գարեգինյանի 23.01.2015թ.-ի թիվ 07/151/233-15 գրությանը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Պռոշյան համայնքի ավագանու 2014թ.-ի դեկտեմբերի 22-ի թիվ 35-Ն որոշման հավելվածի վերնագրում <<2014>> թիվը փոխարինել <<2015>> թվով, <<N 35 >> համարից հետո նշել <<Ն>> տառը և հավելվածի 2-րդ ենթակետի պարբերություններում <<շենքերի գործառնական >> բառերը փոխարինել <<սենքերի գործառնական>> բառերով
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

Մովսիսյան Արմեն
Իսրայելյան Խաչիկ
Մկրտչյան Յուրիկ
Ենոքյան Արթուր
Անդրանիկ Հարությունյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N
Պողոսյան համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 35-Ն որոշման

Պողոսյան համայնքի 2015 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինարարությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

ա. հիմնական օբյեկտների համար՝

_ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ. սույն կետի ա) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ՝

_ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

_ 501 –ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 դրամ.

_ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 35000 դրամ.

գ. ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

_ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.

_ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝2500 դրամ.

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման , արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափեր ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա )հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ. բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա ) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշաակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում է նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքեր գործառնական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3)Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 դրամ:

4) Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

ա.ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համր՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ

բ.ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ ՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

5) Համայնքի տարածքում՝

ա.բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ.հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկներիվաճառքիթույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 180 000 դրամ

5.1)Համայնքի տարածքում՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 դրամ

6) Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել

ա. առևտրի օբյեկտների համար՝ 30 000 դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 75000 դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 300 000 դրամ

դ. խաղատների կազմակերպման համար 750 000 դրամ

ե. շահումով խաղերի կազմակերպման համար 400 000 դրամ

զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 125 000 դրամ

7) Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 0.0 դրամ

8) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել.

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

բ.թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ

գ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ

դ. դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 5 000 դրամ:

10) Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվություն տալու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 8000դրամ

Հավելված
Պռոշյան համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 35-Ն որոշման

Պռոշյան համայնքի 2015 թվականի տեղական վճարների դրույքաչափերը

1) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5 000 դրամ

2) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար, տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 20 000 դրամ

3) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 2500 դրամ:

4) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 1000 դրամ:

5) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հասցեների ճշտման և տրամադրման հետ կապված ծառայությունների փոխհատուցման վճար սահմանել 3000 դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Էլ. հասցե՝proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2015 թվականի N 10

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Պռոշյան համայնքի ավագանու 2014թ.-ի դեկտեմբերի 22-ի թիվ 36-Ն որոշման մեջ 36 թվից հետո <<Ն>> տառը չկարդալ և << պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներրորդ օրը >> բառերը փոխարինել << ընդունման պահից>> բառերով:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

Մովսիսյան Արմեն
Իսրայելյան Խաչիկ
Մկրտչյան Յուրիկ
Ենոքյան Արթուր
Անդրանիկ Հարությունյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ